

5080

Զաւեն վարդապետ

ԵՂԵՔ ԵՐԳԱՆԻԿ

ՓՈԽ. ՌՈՒՍԵՐԵՆԻՑ

1914

Տպարան Բ. Տէր-Սահմալեանի  
ՇՈՒՇԻ

100 171.4  
2594-2.Ա. 2-39-  
ՄՐ

Զաւելի վարդապետ

# ԵՂԷՔ ԵՐՋԱՆԻԿ

1004  
1000  
1000  
1000

ՓՈԽ. ՈՒԽՍԵԲԵՆԻՑ

1914  
Տուլապան Բ. Տէր-Սահմակեանի  
Շ Ա Խ Շ Ի

2.04.2013

5080

29 JUL 2009

Պ յանուարի վեցի  
Հայոց Աթոռութեան

Արքական Ուժամբար,

առ Հայոց Պատասխանեա:

Խ 25 օգոստ 12 Հ. Եպահանձն

Եղիշե

ԵՂԻՖ ԵՐԶԱՆԻԿ

## ՄՏՔԵՐ ԵՐՃԱՆԿՈՒԹԵԱՆ ՄՍՍԻՆ

Երջանկութիւնը մարդկային մտածողութեան բանալին է և ամէնատեսակ տանջանքների ու ձգտումների վախճանական նպատակը: Բոլոր եկեղեցական և պետական հիմնարկութիւնները և մարդիկ անպայման ձգտում են երջանկութեան: Լուրջ սոսոյթիլը երջանկութիւնը տեսնում է զրկանքի մէջ, սրտով հեռ քրիստոնեան՝ հանդերձեալ կեանքում, մւալլ յուետեսը՝ (պեսիմիստ) գոռող արհամարհանքի մէջ և այլն. ամէնքն էլ երջանկութիւն են փնտում. շատերն էլ եթէ առանձին—առանձին չեն գտնում, փնտում են միասին ընդհանուր ոյժերով:

Ուսուցչապետ Կարլ—Գիլտի.

Աւելի լաւ է լինել երջանիկ, քան հարուստ. երջանկութիւնը հաւասարապէս մատչելի է ամէնքին, երիտասարդներին և ծերերին, սովորական ու հանձարեղ մարդկանց, արքային և շնորհանին, նախարարին ու բանվորին:

Ուսուցչապետ Պաօլօ Մանտեգացցա.

Երջանկութիւնը մատչելի է ամէնքին. բոլոր մարդիկ երջանկութիւն են վիհտուում. բայց որտեղ է նա և ուր է թագնուած: Այս խնդիրն այնքան հին է, որքան և մարդկութեան ծագումը. սակայն որքան հին, այնքան և նոր է իւրա-

քանչիւր նոր մարդու համար. եկել ու անցել են հարիւրաւոր ու հազարաւոր սերունդներ, կազմուել նորանոր հասարակութիւններ, պետութիւններ, բոլորն էլ վինտուել են երջանկութիւն. բայց ինչի մէջ կամ ո՞րտեղ. անկշում ցանկութիւնների, լայնատարած երկրների յափշտակման, հարստութիւն դիզելու, փարթամ կեանքի, պարագառութեան, զուարճութեան, գիտութեան, արուեստի, աշխարհային սին փառքի մէջ: Երջանկութեան հասնելու անյագ ծարաւը կաշկանդել է փառասէր և իշխանասէր մարդկանց սիրտը, որոնք փափագել և փափագում են տիրանալ արար աշխարհին և թէս նըանք անցել և անցնում են իրենց յայտնի և անյայտ երկրները սրով և հրով, բայց երջանկութիւնը միշտ էլ փախել է նըանցից... երջանկութեան խնդիրը մնացել է բաց, չլուծուած. բայց է և այժմ:

Երբ աշխարհի Փրկիչ 12 ձկնորսների հետը շրջում էր Պաղեստինում, ասաց. «Աստուծոյ թագաւորութիւնը—(երջանկութիւնը, արքայութիւնը) ի ներքս ձեր է»:

Սակայն մարդկութեան անլսելի է մնացել աստուծային այդ ձայնը, չարասէր մարդիկ սրտանց չեն ընդունել, չեն խորհել այդ մասին: Մեր կեանքի էութեան մէջ չենք ցանկանում աւելի խորը թափանցել և այժմ. երջանկութիւն, բախտաւորութիւն վինտում ենք ամէն տեղ և ամէն ժամանակ, բայց չենք ընթանում դէպի երջանկութիւն առաջնորդող ճանապարհով, այլ

քանի գնում, այնքան աւելի հեռանում ենք երջանկութիւնից: Խնչպէս հին—հին դարերում, այնպէս և մօտիկ անցեալում, յայտնուել են զօրեղ կամքի տէր, անկեղծ սրտով մարդկային բարօրութեան համար խորհողներ, խելամիտ մարգարէներ... իւրաքանչիւրը ըստ իւր հասկացողութեան առաջարկել է մարդկութեան ընդհանուր երջանկութեան ճանապարհը. որը երջանկութիւնը գտել է եղբայրական միութեան, հաւասարութեան մէջ, որը անդուլ աշխատանքի, որը գիտութեան, որը հոգու և մարմնի առողջութեան, որը մարդկային կեանքի և բնութեան ներդաշնակութեան, որը դէպի յաւիտենսկան գաղափարն ունեցած անշեղ ձգտման և ապագայ կեանքի վառ յոյսերի մէջ, որը առ միմիանս ունեցած սիրոյ, որը ճշմարտութեան դիտակցութեան, որը առաքինութիւն և բարութիւն ձեռք բերելու մէջ՝ գործելու այն, ինչ անհրաժեշտ և կարևոր է և այլն: Խելօք, տաղանդաւոր և նոյն խեկ հանճարեղ մարդկանց այս կարծիքները միանգամայն անկեղծ են և պարունակում են շատ ճշմարտութիւններ, բայց, դժբախտաբար, եթէ մէկն ու մէկը մեզնից ընդունի իբրև իր կեանքի նպատակ այս կամ այն կարծիքը, նա լիովին չի հասնի երջանկութեան, անկարելի է միայն սիրած ճանապարհով գնալով և անուշադիր թողնելով միւսները հասնել երջանկութեան:

Անպատճառ մեզանից իւրաքանչիւրը պիտի ստեղծէ իւր երջանկութիւնը զգուշութեամբ և

շրջահայեցողութեամբ, տեղեակ լինելով ուրիշների ցոյց տուած դէպի երջանկութիւնը տանող ճանապարհներին, օգտուելով բոլոր անկեղծ և խելօք մարդկանց կարծիքներից և փորձերից, իւրացնելով նրանցից այն ամէնը, ինչ որ յատուկ և համապատասխան է մեր անհատական բնութեան և այն հիմքերին, որ արմատացել է կըթութեան և դաստիարակութեան միջոցով։

Նրանք, որոնք իրենց ճանապարհներն են առաջարկում դէպի երջանկութիւն, դժբախտաբար, իրենք էլ չեն համաձայնում ուրիշների առաջարկած ճանապարհների հետ և նոյն իսկ շատ անգամ ժխտում են ուրիշների կարծիքը և այդպիսով մեծապէս պղտորում ամէնքի համար կենսական նշանակութիւն ունեցող խնդիրը. այս հանգամանքն է ամենազլխաւոր պատճառներից մէկը, որ մինչև այսօր էլ չի յաջողուել բազմակողմանի կերպով հարթել դէպի ճշմարիտ երջանկութիւն տանող իսկական ճանապարհը։ Այս խնդիրի լուսաբանութեան շուրջը լոյս են տեսել շատ հետաքրքիր գրուածքներ, բրոշիւրներ, յօդուածներ, նամակներ, ճառեր և այլն։ Փրանսիացի յայտնի վիպասան էմիլ Զոլան խօսել է ուսանողների հետ ժամանակակից մարդկութեան կեանքի և նպատակների մասին։ Փրանսիացի տաղանդաւոր գրամատուրգ Դիւման նոյն խնդրի մասին մինամակ է զետեղել „Caulois“ թերթում. Յայտնի համճարեղ վիպասան Տօլստոյը տպագրել է „Съвернъй Вѣстникъ“-ում այս երկու

դոկումենտները „Недѣляи“ յօդուածում մարդկային երջանկութեան մասին իր օրիգինալ հայեցքով, որը և առիթ է դարձել մամուլում լոյս տեսած թեր և դէմ բազմաթիւ յօդուածների։ Լոյս է տեսել նոյնապէս և ֆլորենցիացի մարդաբանութեան ուսուցչապետ Պաօլո Մանտեգացցայի ժողովրդականացած «Երջանիկ լինելու արուեստ» գիրքը։ Լոյս է տեսել նաև Բեռնի համալսարանի ուսուցչապետ Կարլ Գիլտիլ «Երջանկութիւն» վերնագրով հետաքրքրական գիրքը. Զոն Լէբրոկի «Ի՞նչպէս պէտք է ապրել» գիրքը։ Ի՞նչ են ասում այս աշխարհահոչակ խոչոր դէմքերը և երջանկութեան հասնելու ի՞նչ ճանապարհներ են ցոյց տալիս։

Էմիլ Զոլան ուսանողներին ուղղած իւր ճառի մէջ դըականապէս և համոզուած ասում է. «կեանքի իմաստը կամ միակ նպատակը և ուրախութիւնը աշխատանքի նկատմամբ ունեցած հաւատն է. աշխատանքը աշխարհի միակ օրէնքն է. մարդկային կեանքը ուրիշ իմաստ կամ խորհուրդ չունի, մեր գոյութիւնը ուրիշ պատճառ չունի, մենք ամէնքս էլ ծնւում և ապրում ենք աշխարհում, որպէսզի մեր բաժին աշխատանքը կատարենք և ապա հեռանանք. կեանքը մի հանուր գործ, աշխատանք ու շարժում է դէպի մարդկային երջանկութիւնը, միայն աշխատանքի մէջ մարդ կարող է գտնել խաղաղութիւն. դէպի գործ—որքան էլ համեստ լինի այդ գործը կամ աշխատանքը, այնուամենայնիւ նա օգտակար է և գնահատելի, երբ ձեր ոգեսրութեան առարկան

դառնայ։ Աշխատանքը կամ գործը հնարաւորութիւն կտան ապլելու առողջ, ուրախ, և կազատեն յաւիտենական տանջանքից։ միայն աշխատանքի նկատմամբ ունեցած հաւատը կարող է փրկել, աղատել ձեզ։ Այս խնդրի մասին Դիւման ասում է. «Զոլան ուսանողներին ուղղած իւր հրաշալի ճառով առաջարկում է երջանկութեան հասնելու միակ միջոց—աշխատանքը... այդ միջոցը սխալ չէ, բայց և բաւական չէ. թող մարդն աշխատի մտաւորապէս և ֆիզիքապէս, բայց նրա վախճանական նպատակը չի կարող լինել կերակուր ձեռք բերելու հոգուը, կայք ու փառք ձեռք բերելու ձգտումը։ Նրանք, որոնք սահմանափակւում են վերոյիշեալ շրջանակների մէջ, երբ ձեռք են բերում կամ հասնում են իրենց նպատակին, զգում են, որ դարձեալ իրենց մի ինչ որ բան է պակասում։ Մարդը կազմուած է ոչ միայն մարմից, որ պէտք է կերակրել, և ուղեղից, որ պիտի կրթել և զարգացնել, այլև հոգուց՝ իւր առանձին պահանջներով։ այդ հոգին է, որ անդադրում աշխատանքով, մշտական զարգացման և ձգտման ճանապարհով ընթանում է դէպի լոյս ու ճշմարտութիւն։ Եւ մինչև որ ձեռք շրերէ լոյսն ու ճշմարտութիւնը, պիտի տանջէ մարդուն։ Մեզ համար հասել է ժամանակը իրականացնելու՝ «աիրեցէք միմիանց» աստուածային պատգամը, առանց ի նկատի ունենալու թէ ով է ասել այդ—Աստուած, թէ մարդ։ Եղբայրութեան այս մեծ օրէնքը երբ-

եիցէ պէտք է իրականանայ. և լինում են ժամանակներ և ըոպէներ, երբ մենք աներկբայց ցանկանում ենք, որ այդ իրականանայ։

Ըստ Դիւմայի մարդ կարող է առ միմիանս ունեցած սիրոյ փայլուն գաղափարի իրականացման յուսով գտնել կամ հասնել երջանկութեան, առանց նսեմացնելու աշխատանքի գաղափարը, մեծ տեղը յատկացնելով սրտին, որպիսի հանգամանքը, կարծէք թէ, մոռացուած է կմիլ Զոլայի կողմից։ Երջանկութիւնն, ըստ Դիւմայի, աւելի մեղմ և զոհացուցիչ է, քան ըստ Զոլայի։ Դիւման լիշում է հոգու մասին՝ շեշտելով հոգու ձգտումը կամ պահանջը դէպի սէրը, դէպի սըրտակից, նոյն կեանքով ապրող մարդիկ, դէպի հմայիչ բնութիւնը, դէպի նա, ով ուղարկել է մեզ այս աշխարհ։ Էմիլ Զոլան այս ամէնը մի կողմէ թողնում, և բացասելով վերոյիշեալները, համարում է անհանգիստ խոհեր կամ աւելորդ խորհրդածութիւններ։ Հարցըէք ձեր սրտից և նա ձեզ կասէ, ճշշմարիտ է արդեօք Զոլայի ասածը թէ, «Երջանկութիւնը միայն և միայն անդուլ աշխատանքի մէջ է։»

Տօլստոյը խորապէս քննելով Զոլայի և Դիւմայի երջանկութեան մասին ունեցած հայեացքները, կանգ է առնում չինական փիլիսոփայ Լաօղգի կարեոր և օրիգինալ կարծիքի վրայ, մատնանիշ անելով նրա «Առաքինութեան ճանապարհները» գիրքը, որտեղ չինացի փիլիսոփան ասում է թէ, «բարձրագոյն բարին, ինչպէս

առանձին անհատները, այնպէս և ազգերն ու լնդհանուր մարդկութիւնը, կարող են ձեռք բերել ծաօի (Առաքինութիւն կամ ձշմարտութիւն) գիտութեան միջոցով...: Ըստ Լաօդզի մարդկային բոլոր թշուառութիւնները միծ մասամբ առաջ են գալիս նրանից, որ մարդիկ չեն կատարում այն, ինչ որ կարեոր և անհրաժեշտ է, այլ նրանից, որ կատարում են այն, ինչ որ հարկաւոր և անհրաժեշտ չէ: Մշակելով 2ինացու այս օրիգինալ տեսակէտը, մեծ բարոյագէտը առաջ է բերում մարդկային ձեռնարկութիւնների և աշխատանքի օրինակներ՝ փառաբանուած նոյն իսկ այն մարդկանցից, որոնք այլանդակում և փշացնում են մարդկային ընդհանուր կեանքը: Այս ուղիղ և պարզ ցուցմունքները ակամայից պատճառ են դառնում խորհելու այն մասին, թէ մարդկութեան մեծամասնութիւնը ապրում է առանց իմանալու, թէ ուր է գնում ինքը և ինչ է լինելու իր կեանքի վախճանը, թէ մեր կեանքի սայլը որպիսի անդունդներով և ձորերով կտանի մեզ և դէպի որ անդունդը կալացնէ մեզ ժամանակը: Ժամանակ չէ արդեօք յետաղարձ հայեացք ձգել դէպի մեր անհատական անցեալը, քայլ առ քայլ, մանրագննին քննել այդ կեանքը, խորհել մեր աշխատանքի մասին և առանց յուզուելու կամ շփոթուելու հարցնել մեզ—արդեօք այդ աշխատանքը տալիս է մասնաւորապէս մեզ և կամ որևէ մէկին երջանկութիւն կամ բախտաւորութիւն, անհրաժեշտ է նա, և մեր կենդանութեան

օրով կբարեփոխում ամեն բան, ինչ որ անհրաժեշտ և պէտք է, որպէսզի մեր երջանկութիւնը լինի կատարեալ: Մեծ բարոյագէտը փորձով ապացուցել է, որ երբէք ուշ չէ կատարել այն, ինչ որ անհրաժեշտ և կարեոր է, փոխելով մեր անհատական կեանքի հիմք կազմող սկզբունքները, նոյն իսկ յիսուն տարեկան հասակում: Որպէս խելքով ու կամքով ուժեղ, մտածող և լուրջ մարդ, նա ի նկատի չունեցաւ, որ արդէն կէս դար ապրել է իրեն շրջապատող մարդկանց կեանքով, և մի անգամից փոխեց այդ կեանքը ու գնաց այլ ճանապարհով. նա քարոզում է ամենքին. «մարդկային կեանքում տեղի ունեցող բոլոր խոշոր փոփոխութիւնները, ամէնից առաջ, առաջ են զալիս մարդու մտքի մէջ. ինչպիսի արտաքին փոփոխութիւններ էլ տեղի ունենան մարդկային կեանքի մէջ, ինչքան էլ քարոզուի վարմունքների, զգացմունքների փոփոխութեան անհրաժեշտութիւն և այն, այնուամենայնիւ մարդու կեանքը չի փոփոխուի, մինչև որ այդ փոփոխութիւնը առաջ եկաւ, վաղ թէ ուշ, նայած փոփոխութեան կարեռութեան ու անհրաժեշտութեան, նա անխուսափելիօրէն կանցնի մարդու զգացմունքների և գործելակերպի ու ամբողջ կեանքի մէջ, ինչպէս նաւը, երբ փոխում ես դեկը, Քրիստոս ասել է. «սթափուեցէք և փոխեցէք կեանքի նկատմամբ ձեր ունեցած աշ-

խարհայեացքը, հակառակ դէպքում ամենքդ էլ կոչնչանաք»։ հասկացէք, որ մեր կեանքի խորհուրդը կարող է լինել նրա ցանկութեան իրականացումը, ով ուղարկել է մեզ այստեղ, որը և պահանջում է շծառայել անհատական ցանկութիւնների և նպատակների, այլ ծառայել նրա նպատակներին, որը է բոլոր ստեղծուածների կամ արարածների սիրոյ և միութեան ամբողջութիւնը՝ երկնքի թագաւորութիւն հաստատելու համար երկրի վրայ։

Մարդկային տանջանքը սկիզբն է առնում կեանքի նկատմամբ օմնեցած սխալ հասկացողութիւնից և որպէսզի մարդիկ դէպի լաւը կարողանան փոխել իրենց կեանքը, համաձայն իրենց հասկացողութեան, անհրաժեշտ է կենտրոնանալ իւր մէջ, մտածել, խորհել և ապա գործել այն, ինչ որ պէտք է և անհրաժեշտ։ Որպէսզի երկնքի թագաւորութիւնն իրականանայ երկրի վրայ, պէտք է բոլոր մարդիկ սիրեն միմիանց, առանց խտրութիւն դնելու անհատների, ցեղերի և ժողովուրդների մէջ։ որպէսզի մարդիկ կարողանան իրար սիրել այդ ձեռփ, հարկաւոր է, որ փոխուի նաև կեանքի նկատմամբ ունեցած նրանց աշխարհայեացքը, հարկաւոր է, թէկուզ ժամանակաւորապէս, ազատւել կեանքի այն ունայնութիւններից, որոնք մեծապէս արգելը են հանդիսանում ճշմարտապէս ըմբռնելու մեր գոյութեան իմաստը։ Մարդկանց հարկաւոր է բերել միայն այդ համոզման և նոցա առ միմիանս ունեցած սէրը, առ բոլոր մար-

դիկ և առհասարակ դէպի ամէն շունչ անխուսափելիօրէն կարտայայտուի իրենց գործունէութեան մէջ և խման կդառնայ ամէնատեսակ գործողութեանց։ այն ժամանակ մարդիկ կդըտնեն իրենց իսկական գործը և կհաստատուի Աստուծոյ թագաւորութիւնը, որպիսին պահանջւում է մարդկանցից, որպէսզի մարդիկ ստանան նոյն բարիքը, որ խոստացուած է իրենց։ Իւր հայեացքների մէջ խորապէս համոզուած է։ Ն. Տօլստոյը շարունակում է—ես ասում կամ գրում եմ այս ոչ թէ նրա համար, որ գրած կամ քարոզած լինեմ գթարտութիւն կամ ողորմածութիւն և կամ չկուռել չարութեան դէմ, այլ նրա համար, որ յայտնած լինեմ իմ եղբայրներին, թէ ահա այդ ամենը ինձ համար բարիք են բերել. եթէ ձեր սիրտն ևս ձգտում, քաշում է դէպի այդ կողմը, վորձեցէք և զուք։ Տօլստոյը միայն ցանկացողներին է հրաւիրում ձեռք բերելու իսկական երջանկութիւն, վինտուել նրա ճանապարհները և, առանց խախտելու կամ ոչնչացնելու ուրիշի կամքն, անձամբ գտնել իւր երջանկութիւնը։ Նուրբ հոգեբանը գիտէ, որ իւրաքանչիւր բռնութիւն լաւ բան չի ստեղծում. բարի նպատակն անգամ բռնութեամբ չի ստեղծի բարիք, բռնութիւնը կարող է միայն վանել, հեռացնել այդ բարիքից։

Սէրն է միայն ստեղծագործում, նա է զիջող և համբերող. անհամբերութիւնը ձեռք ձեռքի տուած ընթանում է բռնութեան հետ և նո-

քա երկուսով պատերազմ են մղում սիրոյ ստեղծագործող ոյժի դէմ, բայց երբէք չեն կարողացիլ և չեն կարող սիրոյ փայլն ու շերմութիւնը նուազեցնել: Առ Տօլստոյը և Գիւման համակերպւում են դէպի երջանկութիւն տանող գլխաւոր և հիմնական կէտերում, այն է՝ առ բոլոր մարդիկ, առ մերձաւորներն ու հեռաւորները, բնութեան մէջ գոյութիւն ունեցող բոլոր արարածներն ունեցած սէրը, որով ամէնքը հաւասար են Ստեղծողի առաջ և կոչուած են միասին օգտուելու նրա բարիքներից:

Երջանկութեան հասնելու շիտակ ճանապարհ է նկատում վերոյիշեալը նաև ուսուցչապետ Կարլ Գիլտին: Սա յայտնելով իր տեսակէտը մարդկային կեանքի և նրա իմաստի կամ նպատակի մասին, առաջնորդուում է դէպի այն միտքը, թէ աշխատանքը մարդուն երջանկութիւն է տալիս միայն այն ժամանակ, երբ նրա հոգին մաքուր է և զգում է իր սրտում Աստուծուն, երբ տալիս է շրջապատող բնութեան կամ կեանքի նկատմամբ ուզիղ և ճշմարիտ հասկացողութիւն, ցոյց է տալիս մեզ բարոյական կատարելութեան ճշմարիտ ճանապարհը, ազնուացնում մեր հոգին ու բնակեցնում այնտեղ անկեղծ սէր և ճշմարիտ հաւատ:

Աշխատանքը և գիտութիւնը վերոյիշեալ տուիալներով ըմբռնելի են դարձնում, որ մարդ պէտք է սիրէ մերձաւորին և աշխատէ նրա բարորութեան համար: Ով ոգեստուած է այս

բարձր պարտականութեան գիտակցութեամբ, ով ընդունակ է իւր անհատական շահերը զոհաբերելու ընդհանուրի բարիքին, ով աշխատում է ոչ նրա համար, որ իսկոյն ստանայ իւր աշխատանքի պտուղները, վարձատրութիւնը, այլ այդ բոլորն անում է դէպի մարդկութիւնն ունեցած սիրուց, գիտակցելով որ կատարելով իւր բաժին աշխատանքը, միայն իւր պարտին է կատարում, Աստուծոյ պատուիրանն է իրագործում, ոչը մեզ ուզարկել է աշխարհ աշխատելու համար, այդ տեսակ մարդը նեղսիրտ, ինքնասէր ու եսասէր չէ և աշխատանքի մէջ կը գտնէ բաւականութիւն, երջանկութիւն. և այդ ամէնը կարող է իրականակալ միայն սիրոյ ազգեցութեամբ: Ով սիրում է, նա և շարչարւում, աշխատում է: Ուսուցչապետ Գիլտին երջանկութեան ամբողջութիւնը տեսնում է հոգեկան և ֆիզիքական ոյժերի համաշափ գործունէութեան մէջ. մարդ աշխատանքի համար է ծնուած և խիստ պատճում է, երբ այդ կեանքը ցանկանում է փոխել իւր քմահաճոցքի համաձայն. իւրաքանչիւր գործունէութիւն կարող է հետաքրքիր լինել, երբ մարդ լրջօրէն նուիրաբերուի նրան: Սյս և նման տեսակի աշխարհայեացք ունենալով աշխատանքի մասին—ուսուցչապետ Գիլտին ցուցմունքներ է տալիս ինչպէս արզասաւոր կերպով օգտուել ժամանակից, ինչպէս աշխատել, ինչպէս ձեռքբերել դէպի արդիւնաւոր աշխատանք առաջնորդող լաւ սովորութիւններ—և գործնական կեան-

քում լինել գաղափարական... (իդէալիստ): Երջանկութեան հիմքը Գիլտին համարում է ամուր բարոյական համոզմունք, կրթութիւն ու դատիարակութիւն, սէր ու ճշմարտութիւն, ընդունակութիւն ու ձգտում դէպի աշխատանք, հոգեկան և ֆիզիքական չափաւոր միջոցներ ունենալը: Նա ուղիղ է նկատում, որ փողը, մեծարանքը, պատիւները, զուարճութիւնները և այսպէս կոչուած կեանքի այլ բարիքները, որոնց նկատմամբ մարդիկ ընդհանրապէս սիրահար են և ըստ ամէնայնի աշխատում են ձեռք բերել զոհելով նոյն իսկ իրենց իսկական բարիքները, առաջ են բերում մարդու մէջ երկիւղ և փակում երջանկութեան ճանապարհը, չյիշելով բաւականութիւններից ճոխ ու փարթամ, անգործ ու զուարճասէր կեանքից յառաջացած անվերջ հիւանդութիւնների, անթիւ ու անհամար դառնութիւնների, զղեր ու կեանք քայլայող ըոպէական ցանկութիւնների, մշտական տրտունջների մասին...: Որպէսպի մեր շրջապատից բաւական լինենք, նկատում է Գիլտին, ամէնալաւ միջոցն է շատ բան չապասել շրջապատից, երբէք չվախենալ նրանից, բոլոր չարիքների վրայ նայել որպէս մի թոյլ, ժամանակաւոր և ինքն իրեն ոչնչացնող երեսոյթի վրայ: Ընդհանրապէս պէտք չէ առանձին մեծ նշանակութիւն տալ այն ամէնին, ինչ որ երկրային և անցողական է....

Ուսուցչապետ Պաօլօ Մանտեղացցան, որպէս մարդարան—առողջարան, երջանկութիւնը

տիսնում է առողջ հոգու և առողջ մարմնի մէջ, որով և միանում է ուսուցչապետ Գիլտիի կարծիքին. Նա կարծ և ձեաւոր արտայայտութիւններով, բնութեան զանազան երեսոյթներից և մարդկային օրգանիզմի գործառնութիւնից վերցրած պարզ աֆորիզմներով ուրուազծում է իւր երջանկութեան նկարը ցոյց տալով, թէ ի՞նչի մէջ և որտեղ կարելի է գտնել երջանկութիւնը. Նա ասում է. Աերջանկութիւնը մարդու բարոյական առողջութիւնն է. որպէսպի մարդ մարմնով առողջ լինի, պէտք է մաքուր արիւն և լաւ զղեր ունենայ. որպէսպի հոգով առողջ լինի, անհրաժեշտ է լաւ սիրու և լաւ միտք ունենալ: Հոգեպէս և ֆիզիքապէս առողջ մարդը լինելով աղքատ կարող է իւր ամբողջ կեանքի ընթացքում լինել և մնալ երջանկութիւնը մեր մէջն է և ոչ թէ մեր շրջապատող իրերի կամ երեսոյթների մէջ. մեղանից իւրաքանչիւրը ինքը պէտք է լինի իւր երջանկութեան ստեղծողը, ամէն մարդ պէտք է իրեն լաւ ճանաչէ և իւր սրտում կամ հոգում ցանէ այնպիսի սերմեր, որոնք ընդունակ լինեն տալ առատ պտուղներ և ոչ ընդհակառակը. Երջանկութիւնը, ասում է ուսուցչապետ Մանտեղացցան, չի ստեղծւում միայն ցանկութիւններից, ինչպէս հարստութիւնը չէ ներկայացնում մուրհակների կապոց. Երջանկութեան հիմքը առողջութիւնը, սէրն ու անձնուիրութիւնն են. Երջանկութիւնն անխորհուրդ է համարում միայն իւր անձը պաշտող մարդը. Նա

է երջանիկ, ով սիրում և սիրում է։ Մէրը լոյս է, որ կարող է փայլել մեր կեանքի հորիզոնում սկզբից մինչև վախճանը և շմարել նաև արեի մայր մտնելուց յետոյ, որովհետև մենք վակ աշքերով իսկ տեսնում ենք նրանց, որոնց սիրում ենք։ Մէրը հուր է կամացուկ, բայց խորը թափանցող և մարդու կեանքի բոլոր ելմէջները բոցավառող։ Միրել, նշանակում է, բովանդակութիւն ու պարզութիւն տալ մեր անհատական կեանքին ու երջանկութեան։ սիրով ներշնչուած աշխատանքը ճշմարիտ երջանկութեան հասնելու գրաւականն է։ նա մօտեցնում և բաց է անում մեզ համար ուղիղ ճանապարհ դէպի նոր և աւելի հեռու գաղափարներ։ Լոյսն ունի ստուեր, ուրախութիւնը՝ տիրութիւն։ Երջանկութիւնն ևս ունի ստուեր և թշնամիներ։ այդ թշնամիները, որպէս սողացող որդեր, ուտում, չորացնում են երջանկութեան ոստալից և ծաղկեալ ծառը։ ով չէ ճանաշում նրանց, որոնք են՝ մեծամտութիւնը, ամբարտաւանութիւնը, նախանձը և երկիւղը, որոնք կը ծում են երջանկութեան արմատները։ Պաօլօ Մանտեգացցան «երջանիկ լինելու արուեստ» գիրքը եղբափակում է։ ասելով։ «երջանկութիւնը մարդկութեան մեծագոյն մասի համար ներկայանում է ոսկեզօծ մեծ շրջանակի ձեռվ, որի մէջ գտնւում է մի հասարակ նկար։ մինչդեռ ճշմարիտ երջանկութիւնը նման է Ռաֆայէլի կամ Կօրրէջիօյի նկարներին՝ հասարակ շրջանակի մէջ կամ նոյն իսկ առանց շրջանակի..., երջանկութեան դրօշակը պարզութիւնն է և այդ դրօշակի

վրայ արձանագրուած է «շատր քչի մէջ»։ Զօն Լեբբօկը իւր «Ի՞նչպէս պէտք է ապրել» կը թիշ զրբի մէջ ի մի խմբելով երջանկութեան մասին եղած բոլոր յայտնի և հանճարեղ մարդկանց հայեացները, գտնում է, որ մարդիկ իրենց երջանկութիւնը պէտք է վնտուեն խաղաղութեան, հոգու անդորրութեան և հոգեկան աշխոյժ և ուրախ տրամադրութեան մէջ։ Բնութիւնը մարդուս ամէն բան կարող է տալ, բայց նա չի կարող մարդուն երջանիկ դարձնել, միայն մարդը կարող է այդ անել։ Ինչպէս ջութակի վրայ նուագելու, այնպէս և երջանկութիւնն ձեռք բերելու համար վարժութիւն է հարկաւոր։ նա պահանջում է միութիւն, սէր դէպի բոլոր մարդիկ և դէպի բոլոր արարածները։ Մ'արդ իւր մասին առանձնապէս շատ չպիտի խորհի, նա միակը չէ աշխարհի վրայ... ուրախութիւնը, մեր հոգին ուժեղացնելու և ամրացնելու ամէնամիծ միջոցներից մէկն է։ ուրախ սիրտը մեզ հետ կտրում, անցնում է ամբողջ ճանապարհը։ տիրուր սիրտը մի մղոնից յետոյ յոդնում է (Բօրնս)։ մենք այս աշխարհում տանջանկներից ու ցաւերից չենք կարող խուսափել, բայց, որ ուղենանք, բարձր կարող ենք լինել նրանցից։ ոչ հարստութիւնը և ոչ էլ մեծութիւնը չեն ապահովում մեր երջանկութիւնը։ Առանց սիրոյ, գթասրտութեան, հոգեկան անդորրութեան դուք կարող էք հարուստ լինել, մեծ և հզօր ու ամէնակարող, բայց չեք կարող երջանիկ լինել։ երջանկութիւնը ոյժի զօրութեամբ ձեռք բերել և չանկութիւնը ոյժի զօրութեամբ ձեռք բերել և

փողով գնել կարելի չէ. մեր հոգեկան խաղաղութիւնն ու երջանկութիւնը խլում են մեզանից հպարտութիւնը, գոռողութիւնը, ինքնասիրութիւնը, փառասիրութիւնը՝ առանց այդ ամէնի մենք ամէնուրեք կարող ենք լինել երջանիկ, բայց դրանց հետ երջանկութիւնը երբէք չի լինի մեզ հետ: «Խելօք մարդը նա է», ասում է Սոկրատէս, «ով շատ է աշխատում կատարելագործել իրեն, իսկ ամէնաբախտաւորն է նա, ով ամէնից շատ զգում է, որ ինքը կատարելագործւում է»: Կատարելագործուեցէք և խելօք եղէք ձեր ընտրութեան մէջ, այն ժամանակ դուք կարող էք ուրախութիւնը տանել ձեր տունը և տեղաւորել ձեր լայն սրտում, մեծանալու ժամանակ տալ այնտեղ և հոգալ նրա մասին, այն ժամանակ նա կգայ և յաճախակի կերպէ ձեզ հետ, երբ դուք աշխատում կամ մի այլ դործ էք կատարում. լաւ է ուրախ լինել, որովհետեւ ուրախութիւնը Սստուծուն անելիք շնորհակալութիւնն է...»:

Որքան բազմազան, որքան բազմատեսակ ճանապարհներ դէպի երջանկութիւն. բոլորն էլ լաւ, հրապուրիչ ու ցանկալի, բայց դժուար. այդ ճանապարհները, բոլորն էլ, ունին իրենց կանաչազարդ բլուրները, բարձր լեռները, գայթակղութեան քարերը, միաժամանակ նաև անուշաբոյր ծաղիկները և զմայլեցուցիչ հորիզոնները... հաճելի է սիրել և լինել սիրուած, բայց դորա համար անհրաժեշտ է հրաժարուել անհա-

տական կամ հսական կեանքից, եթէ ոչ մոխիք դարձնել իւր եսը, յամինայն դէպս փոքրացնել մանը հատիկի չափ:

Ցանկալի է ունենալ առողջ մարմին և հոգի, բայց դրա համար անհրաժեշտ է խիստ չափաւորութիւն ամէն բանի մէջ:

Միխթարական է Սստուծուն զգալ իւր սըրտում և հոգում ունենալ մշտատե խաղաղութիւն, բայց դրա համար հարկաւոր է հոգու համեստութիւն և խոնարհութիւն, հեղութիւն և անոխակալութիւն, ճշմարիտ խաղաղասիրութիւն և ներողամտութիւն:

Լաւ է միշտ ձգտել դէպի կատարելութիւն, ունենալ զուարթ սիրտ և ուրախ տրամադրութիւն. բայց դրա համար հարկաւոր է հաստատուն և ամուր կամք՝ ընթանալու դէպի յաւիտենական գաղափարն առաջնօրդող ճանապարհով, ունենալ եղբայրական միութեան զգացմունք և մաքուր ու սուրբ սէր դէպի ամէնքը...»:

Այս ամէնն ի հարկէ մարդս կարող է ձեռքբերել, եթէ նա վճռականապէս գնայ իրեն վիճակուած կեանքի ճանապարհով այսպէս թէ այնպէս: Սակայն ինչից կամ որտեղից պիտի սկսել: Սմենից առաջ ինքնաղաստիարակութիւնից և ինքնակրթութիւնից, ապա մանուկ սերնդի դաստիարակութիւնից:

Դուք, մայրեր, անպայման ահճնազոհութեան գնով ձեր զաւակներին սիրողներ, ձեր ընտանեկան կեանքում բախտաւոր և անբախտներ, մութ ու անլուր դիշերները մօտենալով

ձեր քնած մանկան մահճակալին ու երկիւղածութեամբ խաչակնքելով նրա վրայ, կամ ձեռքից բունած զբօսանքի տանելիս՝ մտածել էք երբ և իցէ նորա երջանկութեան մասին...:

Դուք, հայրեք, որ միշտ անհանգիստ էք լինում ձեր որդիների ապագայի մասին ու պարծենում նրանց ընդունակութիւններով և յաջողութիւններով՝ տալով նրանց ձեր սեփական միջոցներն ու տոհմական ժառանգութիւնը, դաստիարակութիւնն և ուսում, արդեօք մտածել էք այդ ամէնի հետևանքների մասին:

Մայրեք և հայրեք, դուք, որ աստուածային կամքով նրանց կեանք էք տուել, ամէնից առաջ դուք պէտք է ապահովէք և ամուր կերպով արմատաւորէք նրանց մէջ երջանկութեան սերմերը, ինչպիսի սերմեր կդնէք նրա ուղեղում, սրտում ու կամքում, ինչ սովորութիւնների կվարժեցնէք կամ ինչ դաստիարակութիւն կտաք, այնպիսի հետևանքներ էլ կտան այն սերմերը, որոնք սերմանել էք նրանց մէջ նրանց ծնուած օրից: Իւրաքանչիւր ահա պիտի լինի ինքնուրոյն և նրա երջանկութիւնը պիտի լինի միայն իք համար՝ բայց այդ անձնաւորութիւնը իր երջանկութեամբ չպիտի ճնշէ ոչ իւր մերձաւորներին կամ մօտիկներին և ոչ էլ հեռաւոր անձանց. մնալով ինքնուրոյն՝ պէտք է միանայ կեանքի հոսանքի մի տեծ և մաքուր վտակի հետ, որը հեղասահ ընթանում է դէպիը նդհանուր մարդկութեան հոսանքը...: Մանկան դաստիարակութիւնը, նրա լոյս աշխարհ գալու օրից, ամբողջովին պատկանում

է մօրը: Մարդու և կնոջ անհատական երջանկութիւնը լաւ ընտանիքն է: Լաւ ընտանիքը անհատական և հասարակական կեանքի գերագոյն հիմքն է, ուր կինը, որպէս մայր և քաղաքացունի, դաստիարակում է իւր զաւակներին ինչպէս նրանց անհատական, այնպէս և նոյն երկրի երջանկութեան համար: Այդ տեսակ մայրը ամէնայն հետաքրքրութեամբ, ըստ ամէնայնի, ուսումնասիրում է իւր մանկան հոգեսր և ֆիզիքական կողմերը, նրա ընդունակութիւններն ու ժառանգական յատկութիւնները և համաձայն այդ տուեալների գաստիարակում է նրան խելացիօքն—առանց մեղնելու նրա բնական յատկութիւնները: Նա ամենայն սիրով և զգուշութեամբ ցանում է այդ անդաստանում բարի սերմեր, աշալլզութեամբ հսկելով և ոչ ոքին չժոյլատրելով ցանել այստեղ որո՞մ: Մօր և հօր այդ սէրը պիտի լինի մաքուր, սուրբ, պարզ, անկեղծ և զգոյշ. ամէնքն էլ պիտի լիշեն Փրկչի խօսքերը թէ «ով որ զայթակեցնէ այս փոքրիկներից մէկին, աւելի լաւ է—որ ջրաղացի քարը կախի պարանոցից և ընկղմուի ծովի անդունղը» (Մատթ. Ժթ—6): Մանկան հոգում չար և վնասակար սերմեր ցանողները, հարազատ թէ օտար, զիտակցաբար թէ անգիտակցաբար, նշանակում է որոմներ են ցանում տասնեակ սերունդների համար. իրենց զաւակներին ճշմարտապէս սիրողները պէտք է զգոյշ և շրջանկատիւնին, միշտ հսկեն և առաջնորդեն դէպի խելա-

ցի և ճշմարիտ սէր, որը և հիմք պիտի դառնայ նրա անհատական երջանկութեան։ Երեխաններն առհասարակ սիրում են նմանուել իրենց մեծերին և ընդօրինակում են նրանցից այն ամէնն —ինչ տեսնում և լսում են. և մակերեսոյթօրէն ընդօրինակելով այն ամէնը, ինչ որ կարող է իւրացնել իւր շրջապատից և ժամանակի ընթացքում ընակեցնելով իւր մէջ արիւն ու մարմին է դարձնում....

Անգիտակից և անզգոյշ ծնողների և դատիարակների պատճառով շատ դժբախտ կեանքեր կան և կլինեն։

Երջանկութիւնը գոյութիւն ունի և ամէնքն էլ զատ զատ—առանց իրար խանգարելու կարող ենք ձեռք բերել. դուք հաւատո՞ւմ էք—որ սէրը որպէս մարդու հոգին շերմացնող, մարդկալին կեանքը լուսաւորող և դէպի աշխատանքը եռանդ ներշնչող ոյժ է. նա ևս հաւատում է նոյն սիրոյ ոյժին, առանց թուլացնելու քո սիրոյ ոյժը... աշխատանքի դաշտը լայն է և անսահման և ամէն մէկը կարող է ունենալ իւր մասը—եթէ միայն մէկ մէջ բուն չի դրել նախանձով թունաւորուած ինքնասիրութիւնը, հիւանդու ափահութիւնը և ուրիշներին զրկելու ցանկութեան ծարաւը. դէպի երջանկութիւն առաջնորդող ճանապարհը խաղաղութեան, սիրոյ, խելացի աշխատանքի ճանապարհն է—որի վրայով կարող են անցնել ամէնքը—մեծերը և վորքերը, հասարակութիւններն ու ազգերը և համայն մարդկութիւնը:

Եթէ ամէն մարդ անկեղծօրէն զննէ իւր կեանքը, կտեսնէ, որ ոչ մի անգամ չի տուժել ճշմարտութիւնն ու արդարութիւնը կատարելուց, այլ դժբախտութիւնների ու պատուհասների մեծագոյն մասը յառաջ է եկել նրանից, որ նա, հակառակ իր ձգտումների և հակումների, աւելի շատ հետեւ է անցաւորին, ժամանակաւորին և այն ամէնին, ինչ որ աշխարհային է.... Անցէք հոծ բազմութեան միջով, առաւելապէս քաղաքների, և զիտեցէք այդ յոկնած, հիւանդու ու անհանգիստ դէմքերը, յիշեցէք այն բոլոր բռնի մահերը, ինքնասպանութիւնները. և հարցըէք, յանուն ինչ բանի կամ գաղափարի են կատարւում այդ տանջանքները, մահերը, յուսահատութիւնները, որ մզում են դէպի անձնասպանութիւններ և դուք կհամոզուէք, որ այդ ամէնի <sup>9/10</sup> մասը մարդիկ կատարում են յանուն աշխարհային ունայն հոգսերի, աւելորդ ցանկութիւնների, որ այդ տանջանքները պէտք չեն և կարող են չինել, որ մարդկութեան մեծամասնութիւնը աշխարհային այդ աւելորդ հոգսերի և ցանկութիւնների զոհն է: Քրիստոնեայի երջանկութիւնը իւր ցանկութիւնների ներդաշնակութիւնն է (հարմոնիա), հիմնուած ֆիզիքական և հոգեկան կեանքի համար իւրաքանչիւրին անհրաժեշտ համեստ պահանջների վրայ, և մաճկալ հողագործի, որի աշխատանքը անհրաժեշտ է ամէնքին, և՝ քաղաքացուն ժամանակակից հասարակական կեանքի պայմաններից յառաջացած բազմագան զբաղմունքներով. իւրաքանչիւրն

Էլ պէտք է ունենայ իր երջանկութեան չափը։ Ինչպէս իւրաքանչիւր երգիշ ունի իւր ձայնի ծաւալը կամ բովանդակութիւնը (ճառազօհ), այն պէս էլ իւրաքանչիւր մարդ ի բնէ ունի իւր երջանկութեան չափը կամ դիասպազոնը։ Մարդ մանկութիւնից իւր ընտանիքում գտնուելով կեանքի նորմալ ու իւր անհատական երջանկութիւնը դաստիարակող պայմաններում, որը և համապատասխան նրա բնական ոյժերի, զարգացնում է նրա մէջ ներդաշնակութիւնը և ապա անցնելով կրթական դաստիարակչական խելացի գիտութեամբ լուսաւորուած ճանապարհը, կամրացնէ և կզարդացնէ ընտանիքում ստացած կամքն ու բարի գգացմունքները և ապա, վերջապէս, կրմնէ կեանքի մէջ միացնելու ընդհանուրի երջանկութեան օգտակար աշխատանիրի միջոցով իւր ընտրած կամ ձեռք բերած երջանկութիւնը. եթե նա մտնէ կեանք կարող է իր երջանկութեան ինքնուրոյն կոռողը լինի համաձայն իւր ցանկութեան։

Կնոջ համար իր երջանկութեան ինքնուրոյն կազմակերպումը ըստ մեծի մասին սկսում է ընտանեկան կեանքի մէջ մտնելու օրից—ամուսնանալուց. այդ ընտանեկան կեանքը սկզբնաւորում է սիրուց, կըքից և կամ հաշվից. կինը և տղամարդը ընտանիքից դուրս չեն կարող գտնել կատարեալ երջանկութիւն, որովհետեւ կինը ընտանիքից դուրս մայր լինել չէ կարող, իսկ տղամարդը հայր. ընտանիքը տալիս է նրանց երջանկութեան ներդաշնակութիւն, որի հիմքը երեխա-

ներն են. ընտանիքում տղամարդը և կինը գրտնում են ֆիզիքական և հոգեկան առողջութիւն, ինչպէս ժուական տուեալներով ապացուցանում է ստատիստիկան, օրինակ, երկարակեցութեան միջին թիւը հաշում են 50 տարի, որը ըստ մեծի մասին վիճակում է հայրերին և մայրերին, քան օրիորդներին, այլիներին, ամուրիներին. «մարդ չէ ստեղծուած առանձնական կեանքի համար, նոյն իսկ եղեմի դրախտում», ասում է Լեբրուկը. ամէնքը ձգտում են իրենց համար ստեղծել ընտանիք. ամուսնութիւնը խիստ պատասխանատու գործ է. նա մարդկային կեանքի ամէնանշանակալից քայլն է. «երջանիկ ամուսնութիւնը», ասում է Ստինլէյ, նոր կեանքի սկիզբն է։ Երջանիկ ընտանիքը երկնքի պատկերն է. տոմսը, որտեղ են մարդն ու կինը, հայրն ու մայրը, եղբայրն ու քոյրը, երեխաներն ու ծնողներն, իւրաքանչիւրը իւր կարողութեան չափ օգնում են իրար նրանց մաքրութիւնը, ազնւութիւնը և սիրոյ ոյժը բարձրացնում են դէպի պարտականութիւն, երկինք և Աստուած»։ Այն ընկերակցութիւնը, որ հետևանք է հաշուի կամ կըքի, երբէք երջանկութիւն շի բերում նրանց համար. կիրքը, ինչպէս ալիշի բերում նրանց համար. կիրքը, ինչպէս ալիշի յաճախ սխալ. նա, ով ամուսնանում է փողի համար, ինքն իրեն փողից ցած է գնահատում. ճշմարիտ և անկեղծ սէրը երջանկութեան իսկական հարթ դաշտն է։ Այս տեսակ ընտանիքն է, կան հարթ դաշտն է։

համակուած փոխաղարձ անձնուիրութեան, յարդանքի և սիրոյ զգացմունքներով, որը կեանքի հոգսերի և յուզմունքների ապաստարան է մարդու և կնոջ համար։ Այն կինը, որի մէջ բարոյական սկզբունքները ներդաշնակօրէն զարդացած են, անկեղծութիւնն ու անձնուիրութիւնը ոչնչով խարդախուած կամ խախտուած չեն, որի խօսքը խելացի է և ճշմարիտ, ընտանիքի մէջ իսկական երջանկութեան սկիզբը կդնէ՝ այն է մաքուր սէր, աշխատաւոր կեանք, պարզութիւն և կարգապահութիւն, նա կլինի լաւ օգնական ոչ միայն նիւթական, այլ և հոգեկան զործերում, նրա ամուսինը և երեխաները, ինչպէս և ինքը, երջանիկ կլինին, համեստ նոյն իսկ աղքատ դրութեան մէջ....:

Ընտանեկան կեանքը տղամարդու մէջ ամրացնում է իսկական քաղաքացու սրբազն պարտականութիւնը, քաղաքացու, որն աշխատում է հասարակութեան համար ցանկանալով իւր օգտակար աշխատանքի մի մասը մտցնել այնտեղ, այն աշխատանքի, որով ապրում է նրա հարազատ ընտանիքը։ Կան նաև ոչ սակաւաթիւ միայնակեաց տղամարդիկ և կանայք, որոնք յատկապէս իրենց աշխատանքի գաղափարով ողերուած իրենց երջանիկ են համարում, բայց այդպէս է արդեօք. ժամանակաւոր գոհացումն կամ ինքնախարէութիւն չէ այդ. արդեօք նրանց յաճախ չի պատում մի հիւծող թախիծ և ինչ որ անյայտ ծարաւ, այն է կեանքի ամբողջացման-

ծարաւ. բայցառութիւններ եղել են, կան և կլինին. աշխարհի Փրկիչն այդպիսի միայնակեաց մարդկանց համար ասել է. «լաւ է, եթէ մէկը կարողանում է տանել միայնակեաց կեանքը և մարդկանց համար մաքուր գաղափարի օրինակ ծառայում։ իսկ ով անհամբեր է, նրան տրուած չէ այդ»։ Մարդիկ ծնուած են ոչ թէ բացառապէս հերոսներ, այլ և մարդ լինելու. մարդուն իսկական երջանկութիւն տալիս է չափաւոր աշխատանքը, համեստ, առողջ, սիրող կեանքը, հոգեկան անդորրութիւնը, առ նստուած ունեցած հաւատը, քչով բաւականանալը, երկար ապրել կարողանալը և խաղաղութեամբ իւր մահկանացուն կնքելը՝ կատարելով այն ամէնը, ինչ որ տրուած է մարդուն երկրի վրայ իրականացնելու. այդ նպատակին մենք կհասնենք, եթէ մեր կեանքը որեէ արժէք ունենայ։ Կեանքն ունի արժէք, այլապէս մեզ կեանք չէր տրուի և եթէ մենք այդ վճիռն ընդունենք և բարձրանանք առաջին աստիճանները, ապա ըստ երենի Դանտէի, երջանկութիւն կպտնենք նոյն իսկ մեր երջանկութեան աստիճանները բարձրանալուն մէջ։ Ժամանակ է հասկանալ, որ սարը բարձրանալիս սկզբում մեզ թէք է թւում, բայց որքան բարձրանում ենք, այնքան հետզհետէ ճանապարհը դիւրին է զառնում, որքան մօտենում ենք զագաթին, այնքան աւելի հեշտանում է վերելքը։ Իսկ երբ սարը մեզ թուայ այնպէս հեշտ բարձրանալի, ինչպէս ջրի վրայ ենթարկուելով քա-

մու ացող հոսանքին, թեթևօրէն սլամալիս, այն  
ժամանակ մենք կարող ենք գուշակել, որ մօտ է  
վերելքը վերջանալու ըոպէն և մենք մոռանալով,  
թէ որքան դժուար է մեր ուղին, խաղաղ կարող  
ենք հանդիստ առնել»։ (Քաւարան, I՞ գլ. 88):  
Ճտապե՞նք դէպի վեր, սարն ի վեր։

«Ազգային գրադարան



NL0151426

ԼՈՅՄ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՒԵԱԼ.

ԸՆԴԽԱՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

ա.	Հոռվմայեցի Եպիկտէտ իմաստասէրի կեանքն ու գարդապետութիւնը	.	.	40 կ.
բ.	Ժողովրդական ընտրութիւններ	.	.	10 կ.
դ.	Ընտանիքի սիւները	.	.	10 կ.
զ.	Դէպի գեղարուեստի հայրենիքը	.	.	50 կ.
ե.	Եղէք Երջանիկ	.	.	10 կ.

---

ՊԱՏՐԱՍ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

ա. Գաստիարակութիւն.

բ. Պատերազմը և նրա ապագան.

դ. Խորտակուած պատնէշ.

զ. Երջանկութիւն.